

Զորքս յորդորեալ՝ տայր նոցա խրրատ,  
 երթալ գըտանել եզ առ մի ի զատ,  
 Զողջ զայն համշիրակս՝ որք էին հըրատ,  
 Նոյն հըրկիզութեան, զորմէ էր գանկատ:

Որոց՝ եւ ասեն, խօսեսջիք թաքուն,  
 Սերտ եւ ամոք բանիւ յունկս ամենեցուն,  
 Ի խոկմանց ժանտից հեռի կալ համբուն,  
 Զատագով լինիլ՝ Յօհան Բաբունւոյն:

Արդ՝ իշխանք մեր՝ ասասջիք այնց յորդ,  
 Քաջ պատրիարգին շեն հակառակորդ,  
 Ապա չէ՛ ձեզ ճահ բնդ չարս գոլ հաղորդ,  
 'Ձ նոյն ձեզ պատուիրէ եւ մեր Առաջնորդ:

Գընացեալ նոցա՝ արարին զողջոյն,  
 Որ յանձնիւր ինքեանց՝ յիւրեանց ժողովոյն,  
 Անդ էր տեսանել թէ զիարդ ի նոյն,  
 Նըւաղիւր ոյժ, կար, խըռովաց դասուն:

Յետոյ Սարգիս մեր՝ յայնց առ իւր կոչեաց  
 Զովմանս ի հըմտաց եւ յերեւելեաց,  
 Որք չէին բընաւ կամակից յուզաց,  
 Որոց զիւր խորհուրդ այսպէս պարզ յայտնեաց:

Պատրաստ եմ՝ ասէրն ի կիւրակէի,  
 Հաճել միտս բազմաց՝ յատեան քարոզի,  
 Նահանջել զաղմուկն, որով ամբօխի,  
 Արժապետն իմ՝ քաջ եւ ազգ մեր բարի:

Հարկ է ձեզ ապա՝ գալ ի ժամատուն  
 Սուրբ Աստուածածնի, որ ի Ղուվսաբուն,  
 Եւ նըստիլ յայնմիկ ցիր եւ ցան ուրոյն,  
 'Ի բսպասել լըռիկ քարոզի ժամուն:

Յողբալն իմ՝ անդէն ի վերայ ազգիս,  
 Յիշելով զարարս՝ զառատ երախտիս,  
 Զանուն քաջութեան փորձ վարդապետիս,  
 Լացջիք անդ եւ դուք միաձայն բնդիս: